



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 231 Է 28

. ՁԵ. 12

201 70

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով.

### հրամայում եմ

1. 2017-2018 ուսումնական տարվանից սկսած Երևանի պետական համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն իրականացնել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի» համաձայն, այն է՝ բակալավրիատում ավարտական աշխատանքի պաշտպանության ձևով, մագիստրատուրայում՝ մագիստրոսական թեզի պաշտպանության ձևով:

2. «Իրավագիտություն», «Միջազգային հարաբերություններ», «Քաղաքագիտություն», «Հանրային կառավարում» և «Դեղագիտություն» բակալավրի կրթական ծրագրերի գծով 2017-2018 ուսումնական տարվա այն շրջանավարտներին, որոնց համար նախատեսված էր ամփոփիչ ատեստավորումն անցնել երկու քննության ձևով, թույլատրել հանձնել մեկ ամփոփիչ քննություն:

3. Սահմանել, որ նախորդող տարիներին Երևանի պետական համալսարանի ամփոփիչ ատեստավորումը (ավարտական աշխատանքի պաշտպանությունը կամ ամփոփիչ քննությունը) չանցած շրջանավարտները վերահանձնում են ամփոփիչ ատեստավորման այն մասը, որը պարտք են մնացել:

4. Ֆակուլտետների ղեկաններին (ինստիտուտի և կենտրոններին տնօրեններին)՝ ամփոփիչ ատեստավորումից առնվազն մեկ ամիս առաջ ԵՊՀ ռեկտորի հաստատմանը ներկայացնել 2017-2018 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների ու անդամների թեկնածությունները (առկա և հեռակա ուսուցման ձևերով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման համար ձևավորվում է մեկ հանձնաժողով) և ամփոփիչ ատեստավորման ժամանակացույցը:

5. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ֆակուլտետների ղեկաններին (ինստիտուտի և կենտրոնների տնօրեններին):

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ